# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<09>> դեկտեմբերի-------------2025թ.                    N ՄՈ/1023-Ա

ք. Արմավիր

### ԹԱՄԱՐԱ ՇԱՌՈՅԱՆԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության, հասարակայնության հետ կապերի վարչության պետի 2025 թվականի դեկտեմբերի 8-ի զեկուցագիրը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Վահրամ Խաչատրյանի այցին մասնակցելու նպատակով.

**որոշում եմ**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի օգնական Թամարա Շառոյանին 2025 դեկտեմբերի 12-ին գործուղել Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնք՝ հումանիտար օգնություն տեղափոխող սերբ օդաչուների ինքնաթիռի ավիավթարի տեղում վեր խոյացած հուշարձանի մոտ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը (պետի պարտականությունները կատարող՝ Ա. Վասիլյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ (գլխավոր մասնագետ՝ Ա. Համբարձումյան) ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
4. Փոխադրումն իրականացնել Nissan Tiida մակնիշի 638LL70 համարանիշի ավտոմեքենայով:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179

Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ